մատուցանէ առաջի Մղտեսուն թէ Երդուի՛ր: Եւ նա ասաց թէ Դու ես ասեր զխօսքդ եւ դու հայհոյեր ես եւ դու զլանաս զասածդ եւ ես չէ՞ր երդուիմ. իսկապէս որ լսեցի այն օր ի մէջ դատաստանին եւ խուռն ամբոխին, որ խօսք ձգեցին ոմանք թէ Եղիազարին մօտ Ա Բ երէց կայ կախելու, որ ես ասի թէ Վասն է՞ր են կախելու, նոցա մեղան ի՞նչ է, եւ դու ի վերայ եկիր և կանչելով թէ Մարդի՛ք, զսորա խօսքն կոխեցիք, այն ձեր ասած կախելու երիցունքն սորա երէց են. որ այլք ի վարի կողմն անկեալ յիրար, եւ կէսք ելին ի դուրս, և յելանելն և մեր՝ դու յառաջէիր քան զիս, ի դուրս ելանելոյ ժամանակն այս նիչ տեղւոջ պառաչելով երթայիր եւ հայհոյէիր թէ Այն երիցունքն որն զիւր կինն պարգեւս տաեր Եղիազարին և որն բողաւագութիւն առնեն նորա. եւ ես զկնի քո երթայի. վասն է՞ր զխօսքդ կ'ուրանաս այժմ. ի՞նչ կու կանչես, ի՞նչ կու պառաչես. տուաճութիւն չարաք. դու գիտես: Ամենայն ամբոխ նստեալքն եւ կանգնեալքն լռէին և ունկն դնէին խօսիցս: Եւ յորժամ պարտեցաւ՝ սկսաւ այլ եւս պառաչել, կանչկանչել թէ Ահա՛յ ասած եմ և այլ շատ, թող ամենեքեան աղբ ուտեն, ի՞նչ պիտի առնեն, միթէ զանդա՞մս կու կտրեն. ասեր եմ: Եւ Մղտեսին պատասխանեաց. Հապա՛յ զիմ զլո՞ւխս կու կտրեն, մա՛րդ, մեք ընդ քեզ կռիւ չունիմք, թէ ունիմ՝ կ'ասես միոյն Ե: Եւ սկսան յամենայն կողմանց զնոյն ասել նմա, և բարձաւ աղաղակն մեծ: Եւ Առաջնորդն ելեալ, յայս կոյս և յայն անկեալ հազիւ դադարեցոյց: Եւ սկսաւ Առաջնորդն ի մեր կողմս ասել թէ Զայդ բանն զոր արարիք, թէ որքան փոքր մարդ էր Ղալֆան՝ վասն է՞ր չկանչեցիք և զսա՛յ ընդ ձեզ: Եւ պատասխանեցին. Բազում անգամ ձայնեցաք և ոչ եկն թէ Հիւանդ ունիմ ի տունս. և լռեաց եւս յայժմ: Եւ ապա՛յ ասէ վասն Թըլթըլին